

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 263-Ա

28 օգոստոսի, 2020 թվական

**ՄԻ ՇԱՐՔ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և Որոշման հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարի՝ 2020 թվականի մայիսի 15-ի թիվ 40-Ա հրամանի հիման վրա իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող ընկերությունների կողմից սպասարկվող երթուղիները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցների շահագործումը՝

- 1) «Հարթ ուղի» ՍՊԸ՝ թիվ 46 ավտոբուսային երթուղի՝ 0317S, 0342S, 0424S հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներ,
- 2) «Լիգա» ՍՊԸ՝ թիվ 452 ավտոբուսային երթուղի՝ 1201L, 3397L, թիվ 454 ավտոբուսային երթուղի՝ 3168L և թիվ 460 ավտոբուսային երթուղի՝ 3390L հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներ:

2. 48 ժամով արգելել «Հայր և որդի Մկրտչյաններ» ՍՊԸ-ի կողմից սպասարկվող թիվ 8 ավտոբուսային երթուղում շահագործվող 1271S և 4213S ավտոտրանսպորտային միջոցների շահագործումը:

3. Տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները ժամանակավոր կատարող Արտյուշ Գրիգորյանին՝ ապահովել վերոնշյալ ընկերությունների սույն որոշման մասին տեղեկացումը:

4. Ավտոտրանսպորտային միջոցների շահագործումը արգելվում է տեղեկացման պահից:

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 28/08/20 13:48:53 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ